



# ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ԱՅՎԱՆՔՆԵՐՈՒ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ

**WESTERN PRELACY**

**OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA**

**H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE**

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: [Prelacy@aol.com](mailto:Prelacy@aol.com) Website: [www.westernprelacy.org](http://www.westernprelacy.org)



## **Ս. ԹԱՐԳՍԱՆՉԱՑ ՏՕՆԻՆ ԱՌԹԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ՊԱՏԱՐԱԳ Ս. ՔԱՌԱՍՆԻՑ ՄԱՆԿԱՆՑ ԵԿԵՂԵՑՈՅՑ ՄԷՋ**

Կիրակի, 11 Յոկտեմբերին, Օրենճ Քաունթիի Ս. Քառասնից Մանկանց Եկեղեցույ մէջ, հրաւերովը Հոգեւոր Հովիւին եւ Հոգաբարձութեան, եւ կազմակերպութեամբ Արի Կիրակոս Մինասեան Ազգ. Վարժարանի Տնօրէնութեան եւ ծնողա-ուսուցչական կազմին, տարիներու սովորութեան համաձայն, այս տարի եւս հանդիսաւորապէս տօնախմբուեցաւ Սրբոց Թարգանչաց յիշատակը Եպիսկոպոսական Ս. Պատարագով եւ Հայ Գիրքի վաճառք-ցուցահանդէսով:



Ս. Պատարագը մատոյց Թեմիս Առաջնորդ՝ Բարձր. Տ. Մուշեղ Ս. Արք. Մարտիրոսեան: Սրբազան Հօր առընթերակայ էին Հոգ. Տ. Պարթեւ Վրդ. Կիլիւմեան եւ Եկեղեցույ հոգեւոր հովիւ՝ Արժ. Տ. Հրանդ Քիւյ. Երեցեան:

Ս. Պատարագին աղօթակից էր նաեւ եւ Վերաբերումը կատարեց, Արեւելեան Թեմի երիցագոյն

հոգեւորական՝ Արժ. Տ. Մուշեղ Ա. Քիւյ. Տէր Գալուստեան:

Ս. Պատարագի ընթացքին, Առաջնորդ Սրբազան Հայրը իր պատգամը փոխանցեց ներկայ հաւատացեալներուն:

Սրբազանը նախ անդրադարձաւ Թարգմանիչ Վարդապետաց ժամանակաշրջանի Հայաստանի մէջ տիրող քաղաքական տխուր երեւոյթին, ինչպէս նաեւ Հայ լեզուին ու կրօնքին դժուարութիւններուն, որոնք շահագործուելով օտար երկիրներու կողմէ՝ փորձեցին աղաւաղել Հայ ժողովուրդի ինքնւորոյն դիմագիծը եւ վտանգել Հայոց Եկեղեցույ բարգաւաճումին: Հայ ժողովուրդի դիմակալած կրօնական եւ աշխարհիկ վտանգին դիմաց, սակայն, Աստուած ինք, ինչպէս յայտնուած էր Հայաստան աշխարհի երկնակամարին վրայ ու իր մատով ուրուագծած էր Հայոց Եկեղեցույ հիմերը, այս անգամ եւս երկինքէն տեսիլիքի մը մէջ կը յայտնուէր

Ս. Մեսրոպ Վարդապետին եւ իր մատով կը գծեր Հայոց ոսկեղնիկը՝ Հայոց տառերը:

Թարգմանչաց տօնը մեծագոյն տօներէն մէկն է, եթէ ոչ մեծագոյնը, որ լուսաւորեց մեզ, ե՛լ Ազգով, ե՛լ Մշակոյթով, շեշտեց Սրբազան Հայրը:

Յաւարտ Ս. Պատարագին, Սրբազան Հայրը թափօրով առաջնորդուեցաւ Եկեղեցւոյ «Ղուկասեան» սրահ, եւ կատարուեցաւ Հայ Գիրքի նուիրում Վաճառք-ցուցահանդէսի բացումը:

Վարժարանի աշակերտները ներկաներուն հրամցուցին Թարգմանչաց նուիրում շարք մը արտասանութիւններ:

Սրբազան Հայրը ցուցահանդէսը բացուած յայտարարելէ ետք, անգամ մը եւս գնահատեց վարժարանի տնօրէնութիւնն ու կազմակերպիչ բոլոր նուիրեալները՝ որոնք տարիներու աւանդութեան վերածած սոյն ձեռնարկով ամէն տարի Հոկտեմբեր ամսուայ ընթացքին կը կազմակերպեն Հայ մշակոյթին նուիրում Գիրքերու ցուցահանդէսը, եւ օրինեց աշակերտները:

Աւարտին՝ ներկաները միասնաբար երգեցին «Կիլիկիա» մաղթերգը, որմէ ետք Սրբազան Հօր «Պահպանիչ»ով ժողովուրդը մօտեցաւ ցուցադրուած գիրքերուն:

## **EPISCOPAL DIVINE LITURGY CELEBRATED AT FORTY MARTYRS CHURCH IN HONOR OF THE FEAST OF THE HOLY TRANSLATORS AND ARMENIAN CULTURAL MONTH**

In observance of Armenian Cultural Month and the Feast of the Holy Translators, on Sunday, October 11<sup>th</sup>, 2009, Episcopal Divine Liturgy was celebrated at Forty Martyrs Church in Orange County, followed by a book fair to honor of the legacy of the founders of the Armenian alphabet and our translator forefathers.



H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, celebrated Divine Liturgy, assisted at the altar by Very Rev. Fr. Barthev Gulumian and Rev. Fr. Hrant Yerezian. Retired clergy member Archpriest Fr. Moushegh Der Kaloustian, who is visiting from the East

Coast, also participated in the service.

The Prelate began his sermon by reflecting on the dire political situation in Armenia during the time of the holy translators, and the difficulties that abounded for lack of a written language which foreigners used to their advantage to try and diminish the national identity of the Armenian people and weaken the Armenian Church. It was in these circumstances, said the Prelate, that God appeared to St. Mesrob Mashodts in a vision and revealed to him the

script of the Armenian alphabet, thus changing the course of history and enriching our nation and culture.

The Prelate also reflected on the signing of the protocols between Armenia and Turkey, urging the faithful to renew their faith, to foster our heritage, culture, and language, and be resolute in the demanding of our national rights. The Prelate concluded with a prayer for the welfare of Armenia.

At the conclusion of Divine Liturgy, the Prelate was led in a procession to “Gugasian” Hall where he conducted the opening of the book fair organized by the administration and teacher-parent committee of Ari Guiragos Minassian School. A.G. Minassian School students joined the church choir in the singing of a hymn and recited poetry dedicated to the holy translators.

In his remarks the Prelate commended acting Principal Mrs. Kohar Zaher and the parent-teacher committee for keeping with tradition and organizing the book fair each year, and conveyed his message to the attendees urging them to honor the legacy of our forefathers by teaching their children Armenian and working towards the splendor of Armenian educational institutions, specifically A.G. Minassian School.

The opening ceremony concluded with the singing of the Cilician anthem, followed by the Prelate’s benediction.

\*\*\*

## **ՍՐԲԱՉԱՆ ՀԱՅՐԸ ՆԵՐԿԱՅ ՊԻՏԻ ԸԼԼԱՅ LEBANESE AMERICAN FOUNDATION ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԵԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՁԵՌՆԱՐԿԻՆ**

Lebanese American Foundation ընկերակցութեան տարեկան ձեռնարկը տեղի պիտի ունենայ Կիրակի, 18 Յոկտեմբերին, երեկոյեան ժամը 5:30-ին, Beverly Wilshire պանդոկին մէջ, Beverly Hills: Ձեռնարկին պատուոյ հիւրն է Ազգային բարերար՝ Տիար Վաչէ Մանուկեանը:

Առաջնորդ Սրբազան Հայրը ներկայ պիտի ըլլայ հանդիսութեան եւ պիտի փոխանցէ իր օրհնութիւններն ու շնորհաւորանքը: Ներկայ պիտի ըլլան նաեւ մեր Թեմէն բարերարներ:

## **PRELATE TO ATTEND LEBANESE AMERICAN FOUNDATION PRIDE OF HERITAGE BANQUET**

On Sunday, October 18<sup>th</sup>, 2009, the Pride of Heritage Banquet of the Lebanese American Foundation, benefitting the House of Lebanon, will take place at the Beverly Wilshire Hotel. During the banquet philanthropist Mr. Vatche Manoukian will be honored with the Pride of Heritage award.

The Prelate will attend and convey his blessings.

\*\*\*

## **ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ «ԱՆԻ» ՊԱՐԱԽՈՒՄԲԸ ԿԸ ՆՇԷ ԻՐ 35 ԱՄԵԱԿԸ**

Համազգայինի «Անի» Պարախումբի 35-ամեակի ձեռնարկը տեղի պիտի ունենայ Կիրակի, 18 Յոկտեմբերին, երեկոյեան ժամը 6-ին, Glendale High School-ի հանդիսասրահին մէջ:

Յանուն Առաջնորդ Սրբազան Զօր, Զոգշ. Տ. Պարթեւ Վրդ. Կիւլիւմեան ներկայ պիտի ըլլայ ձեռնարկին եւ պիտի փոխանցէ Առաջնորդ Սրբազան Զօր օրհնութեան եւ շնորհաւորանքի խօսքը:

### **HAMAZKAYIN ANI DANCE COMPANY 35<sup>TH</sup> ANNIVERSARY PERFORMANCE**

The Hamazkayin Ani Dance Company 35<sup>th</sup> anniversary performance will take place on Sunday, October 18<sup>th</sup>, at the Glendale High School Auditorium.

Very Rev. Fr. Barthev will represent the Prelate and convey his blessings.

\*\*\*

## **ՍՐԲԱԶԱՆ ԶԱՅՐԸ ՆԵՐԿԱՅ ԵՂԱՒ ԶԱՅԱՍՏԱՆ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԺՈՂՈՎԻՆ**

Հայաստան Համահայկական Հիմնադրամի Խնամակալ Մարմնի 2009 տարեշրջանի հերթական երրորդ ժողովը գումարուեցաւ Հինգշաբթի, 15 Յոկտեմբերի երեկոյեան, Հիմնարկութեան կեդրոնատեղիին մէջ, Կլենտէյլ:

Ժողովի օրակարգին վրայ ներկայացուեցաւ յառաջիկայ Թելեթօնի ծրագիրը:

Առաջնորդ Սրբազան Զայրը, իբրեւ անդամ Խնամակալ մարմնի, մասնակցեցաւ ժողովին:

### **PRELATE PARTICIPATES IN ARMENIA FUND CORPORATE BOARD MEETING**

On the evening of Thursday, October 15<sup>th</sup>, 2009, the third corporate board meeting of Armenia Fund took place at the organization's headquarters in Glendale.

The meeting focused on details of the 12<sup>th</sup> International Telethon Campaign titled "Our Shushi".

The Prelate, a corporate board member, participated in the meeting.

\*\*\*